ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1956 Общественные науки

Ա. Ռոգուշին

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՅՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Մինչև ռեսպուբլիկական կարգերի հաստատվելը, Թյուրքիայում հիմնական ուսումնական հիմնարկները եղել են մուսուլմանական հոգևոր դպրոցները, որտեղ ուսումնասիրվում էին առավելապես արաբական լեզու, բարոյագիտություն, աստվածաբանություն, մուսուլմանական իրավաբանություն և նման դիսցիպլիններ։ Դպրոցների այդպիսի բնույթը բխում էր հենց իր իսկ օսմանյան կայսրության թեոկրատական էությունից։ Ինչպես հայտնի է, թյուրքական սուլթանները 1517 թ. սկսած կայսրության յայնատարած տերիտորիայում մարմնավորում էին իրենց մեջ և հոգևոր և վարչական իշխանությունը։ Ուսումնական տարրական հաստատությունների դերը կատարել էին այսպես կոչված «կվարտալային դպրոցները», որոնցից հետո հաջորդ աստիճանն էին կազմում միջնակարգ դպրոցները՝ «մեդրեսե»։

Թյուրքական ազգային բուրժուազիան Քեմալ Աթաթյուրքի գլխավորությամբ իշխանության գլուխ անցնելով, չէր կարող հաշվի չառնել ժողովրդական մասսաների տրամադրությունները, որոնք կանգնել էին երկրի սոցիալական վերակազմավորման բացահայտ պայքարի ուղու վրա՝ և անցկացրեց մի շարք միջոցառումներ հոգևորականության ազդեցությունը սահմանափակելու և դպրոցական գործը վերակազմակերպելու համար։ 1924 թ. մարտի 3-ին մեջլիսը ընդունեց խալիֆաթը և հոգևոր դպրոցները «մեդրեսեները» վերացնելու օրենքը, որոնք ծառայում էին որպես նրա գլխավոր հիմքը։ Առժամանակ հետո փակվեցին իմամներ և քարոզիչներ պատրաստող դպրոցները, և բոլոր ուսումնական հաստատությունները աշխարհիկ ուսուցման հիման վրա ենթարկվեցին ունիֆիկացման։ Կրոնական առարկաների դասավանդումը վերացվում էր դպրոցական ծրագրերից։ 1925 թ. սեպտեմբերի 2-ին ընդունվում է մի դեկրետ դերվիշային օրդեններ վերացման մասին. սրանք հոգևոր դպրոցներին զուգընթաց հանդիսանում էին կրոնական խավարամոլության բուծարաններ։ 1928 թ. ապրիլի 10-ի մեջլիսի որոշումով կոնստիտուցիայի 2-րդ հոդվածից հանվեց այն նախադասությունը, ըստ որի «Թյուրքիայի պետական կրոնը հանդիսանում է իսլամը»։ Վերջապես 1928 թ. նոյեմբերի 3-ին մեջլիսն ընդունեց թյուրքական այբուբենի լատինացման օրենքը։ Այս բոլոր ռեֆորմները նշանակալի չափով խախտեցին հոգևորականության ազդեցությունը։ Արդյունքը եղավ այն, որ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին վերացնելու անգրագիտությունը և բարձրացնելու ժողովրդի հանրակրթական մակարդակը։

1928 թ. բացվեցին, այսպես կոչված, «ժողովրդական դպրոցներ», որոնք իրենցից ներկայացնում էին հնգամսյա դասընթացներ հասակավոր բնակչության մեջ անգրագիտությունը վերացնելու համար։ Այդ դասընթացները, որոնցում ուսում ստացան 486,8 հազար մարդ, գոյություն ունեցան մինչև 1935 թ.[1]։

Ֆ. Աթաթյուրքի և Ի. Ինենյուի կառավարության միջոցառումները լուսավորության բնագավառում որոշակի դրական արդյունքներ տվին։ Ըստ թյուրքական վիճակագրական պաշտոնական տվյալների, ուսումնական հաստատությունների թիվը 1935—36 ուսումնական տարվա 6614-ից աճել է մինչև 16.858-ի 1948—49 ուսումնական տարում, իսկ նրանցում եղած աշակերտների թիվը համապատասխանաբար մեծացել է 770.611-ից մինչև 1.632.275[2]։

Հայտնի է, որ քեմալիստական կառավարությունը ժողովրդական կրթության պրոբլեմը մինչև վերջը չլուծեց։ Դատելով, ըստ թյուրքական վիճակագրության ակնհայտորեն իջեցված պաշտոնական տվյալների, 1950 թ. անգրագետները կազմում էին երկրի բնակչության 64,4%։ Իրականում անգրագետների թիվը վերոհիշյալ թվից շատ ավելի է, որովհետև վիճակագրությունը գրագետների մեջ է հաշվում նաև բոլոր նրանց, ովքեր կարողանում են ստորագրել թեկուզ միայն իրենց անունը։ «Ակշամ» թերթը գրում էր, որ «Թյուրքիայի գրագետների քանակությունը բնակչության 15%-ից բարձր չէ»[3]։

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, երբ Թյուրքիան ներգրավվեց իմպերիալիստական ագրեսիվ բլոկների մեջ և սկսեց կրել իր ուժերից վեր ռազմական ծախսեր, անգրագիտության վերացման պրոցեսը զգալիորեն դանդաղեց։ 1955 թ. բյուջետային տարում լուսավորության կարիքների համար բաց էր թողնված 372 մլ. լիրա, և այդ այն դեպքում, երբ ռազմական նպատակների համար և օտարերկրյա ռազմական «օգնության» հետ միասին նշանակված ընդհանուր գումարը հասնում էր 3 միլրդ. լիրայի[4]։ Պարզ է, որ բյուջետային միջոցների այսպիսի անհամաչափ բաշխման դեպքում, անհնարին է լրջորեն խոսել ժողովրդական կրթության պրոբլեմի լուծման մասին։ Ըստ 1955 թ. բնակչության մարդահամարի ենթադրական տվյալների, գրագիտության աճը տոկոսային հարաբերությամբ հետ է մնում բնակչության աճից[5]։ Ներկայումս իշխանության գլուխ գտնվող կառավարության դեմոկրատական պարտիան լուսավորության բնագավառում վարում է որոշակի դասակարգային քաղաքականություն, որը ծառայում է բուրժուազիայի շահերին։

Այն սահմանափակվում է միմիայն նեղ շրջանակներով՝ ինտելիգենցիա պատրաստելու և նրանով պետական ապարատը կոմպլեկտավորելու համար, ինչպես և որակյալ կադրերով տնտեսության դանազան ճյուղերը ապահովելու գործով, իսկ ժողովրդին տալիս է գիտելիքների միայն այն նվազագույնը, առանց որի չի կարող բավարարվել ինքը՝ բուրժուազիան։ Մեջլիսի դեպու-

[1] «Ջումհուրիեթ», 17/III 1954։
[2] «Bü kige I'st tistik Uilliq'u», Ankara, 1950, էջ 125։
[3] «Ակշամ», 12/VI 1952։
[4] «Ջաֆեր», 19/II 1955։
[5] Նույն տեղում, 7/III 1956։

տատ Նիհադ Ռեշատ Բելգերը, մեջլիսի ամբիոնից հայտարարեց, որ Թյուրքիայի ժամանակակից լուսավորության ամբողջ սիստեմի խնդիրն է չինովնիկներ պատրաստել[1]։

Թյուրքիայում գոյություն ունեցող ուսումնական հաստատությունների ցանցը բացահայտորեն անբավարար է կյանքում ժողովրդական կրթության լայն ծրագիր անցկացնելու համար։ Առանձնապես քիչ են դպրոցները արևելյան և հարավ-արևելյան վիլայեթներում. դրանց բնակչության մեծ մասը կազմում են ազգային փոքրամասնությունները, որոնք չեն տիրապետում կամ թույլ են տիրապետում թյուրքերեն լեզվին։ Դրանք համատարած անգրագիտության շրջաններ են, որովհետև այդտեղ ազգային դպրոցներ ընդհանրապես չկան, իսկ թյուրքական դպրոցները հաճախում են հիմնականում չինովնիկների, սպաների, առևտրականների, ձեռնարկատերերի, խոշոր հողատերերի և նմանների երեխաները։ «Հարավ-արևելյան շրջանում եղած մարդը,—անկեղծորեն խոստովանում է «Վաթան» թերթը,—թյուրքերեն լեզվի թույլ տարածվածության և անկուլտուրականության վկա է հանդիսանում»։ Թյուրքերեն լեզուն իմացող սակավաթիվ լինելը, բնակչության հետամնաց կուլտուրական մակարդակը այնքան ավելի ոարսափելի պատկեր է ներկայացնում[2] որքան մոտենում ես գյուղին։ Պատկերացնելու համար, թե որքան հետամնաց վիճակումն է արևելյան և հարավ-արևելյան Անատոլիայի բնակչությունը, բավական է ասել, որ Ագր վիլայեթի գրագետները տղամարդկանց մեջ կազմում են 17,4%, իսկ կանանց մեջ՝ 2,7%[3], իսկ Մարդին վիլայեթում դրանից էլ պակաս. տղամարդկանց մեջ 15,4%, կանանց մեջ՝ 2,1%[4]։ Հարկավոր է հաշվի առնել, որ անգամ այդ փոքր տոկոսը առավելապես ընկնում է թյուրք բնակչության վրա, որին այս կամ այն չափով, այդ դպրոցները մատչելի են։

Թյուրքիայի ուսումնական հաստատությունները ստորաբաժանվում են պետականի, մասնավորի, ազգայինի և օտարերկրյա։ Բոլոր դպրոցները, բացառությամբ պետականների, պատկանում են մասնավոր մարդկանց կամ ընկերությունների։

Ազգային դպրոցներ ունեն միայն հրեական, հայկական և հունական փոքրամասնությունները, որոնք բնակվում են Ստամբուլում։ Այստեղ հաշվվում է 31 հայկական, 46 հունական և 5 հրեական դպրոցներ (տարրական, միջնակարգ և լիցեյներ)[5]։ Այդ դպրոցները հանդիսանում են ոչ թե ազգային կուլտուրայի օջախներ, այլ ազգային փոքրամասնությունները թյուրքացնելու հիմնական միջոց, դեկավար շրջանների ասիմիլյատորական քաղաքականության գենք։ «Ջումհուրիեթ» թերթը 1952 թ. հոկտեմբերի 25-ի «Լեզվի միասնականությունը՝ ազգի միասնականությունն է» խորագրով հոդված է զետեղել, որի մեջ ասված է հետևյալը. «Ռեսպուբլիկան ազգային փոքրամասնությունների դպրոցները մտցրել է

---

1 «Ջումհուրիեթ», 26/II 1953։
2 «Վաթան», 10/VI 1953։
3 Նույն տեղում, 21/I 1953։
4 Նույն տեղում, 10 VI 1953։
5 Riza Serhadog'lu, Büyük I'stanbul Albumu, I'stanbul, s. 110—111.

թյուրքերեն լեզվի, թյուրքական գրականության և այլ ազգային դիսցիպլինների դասավանդումը... Այդ միջոցառումը մեր երկրում կհասցնի ազգային փոքրամասնությունների էլեմենտի վերաբերմանը, կուլտուրական ներգործության միջոցով։ Ազգի միասնությունը հնարավոր է միայն ազգային փոքրամասնություն և մեծամասնություն բաժանման բացակայության դեպքում... Թյուրքական կուլտուրան տարածելու ուղիով ռևոլյուցիոն Թյուրքիան ոչնչացնում է այն տարբերությունը, որը տևել է դարերի ընթացքում[1]։ Մեր բերած մեջբերումը լիակատար անկեղծությամբ բացահայտում է ազգային դպրոցների նշանակության էությունը։ Սակայն Թյուրքիայի ղեկավար շրջանները խոչընդոտում են բանալ նույնիսկ այդպիսի, թող թույլ տրվի ասել, «ազգային» դպրոցներ, վախենում են ազգային փոքրամասնությունների գիտակցության բարձրացումից։ Հատկապես ահա այստեղ է, բայց ոչ թե վերջինների դեպի կրթությունը ձգտման բացակայության մեջ (ինչպես այդ փորձում են բացատրել թյուրքական որոշ ասիմիլյատորներ), այն պատճառը, թե ինչու Թյուրքիայի տերիտորիայում, բացառությամբ Ստամբուլի, մինչև այժմ ուրիշ ոչ մի տեղ և ոչ մի ազգային դպրոց չկա։

Օտարերկրյա դպրոցները (տարրական, միջնակարգ, լիցեյ և կոլեջներ) հիմնականում նույնպես կենտրոնացված են Ստամբուլում։

Այս քաղաքում գործում են 7 ֆրանսիական, 5 իտալական, 4 ամերիկյան, 2 ավստրիական, 2 անգլիական և մեկ իրանական դպրոցներ։ Այդ դպրոցները բացված են զանազան ընկերությունների միջոցով և հանդիսանում են օտարերկրյա իմպերիալիզմի ագենտուրան։

Թյուրքիայում գոյություն ունի տարրական ընդհանուր պարտադիր ուսուցման օրենք, որը կրում է զուտ դեկլարատիվ բնույթ, քանի որ մինչև հիմա ոեալ պայմաններ չեն ստեղծվել, որպեսզի բոլոր դպրոցական հասակի երեխաները լիովին ընդգրկվեն ուսուցման սիստեմում։ «Ջումհուրիեթ» թերթը նշում է, որ «երկրի առաջնահերթ պրոբլեմը հանդիսանում է լուսավորությունը, իսկ լուսավորության սիստեմի գլխավոր պրոբլեմը՝ տարրական կրթությունը»[2]։ 1954—55 ուսումնական տարում 2963 հազ. դպրոցահասակ երեխաներից (տարրական ուսուցման շրջանի) 1085 հազ. երեխա (մոտ 37%) գտնվում էր դպրոցից դուրս[3]։ Ընդամենը տարրական դպրոցի հաճախման տոկոսը բարձր է քաղաքներում և զգալի չափով իջնում է գյուղական վայրերում. 1952—53 ուսումնական տարում դիտվել է հետևյալ պատկերը[4]։

Տարրական ուսուցման շրջանի երեխաների թիվը	Տարրական դարոցի աշակերտների թիվը	%%-ով
Քաղաքներում 704.000	517.106	73,5
Գյուղական վայրերում 2.090.000	1.193.318	57

[1] «Ջումհուրիեթ», 25/X 1952։
[2] Նույն տեղում, 12/II 1953։
[3] «Ուլուս», 17/II 1956։
[4] «Ջումհուրիեթ», 17/III 1954։

Հետևարար, նույնիսկ քաղաքներում երեխաների մի քառորդից ավելին դպրոց չի հաճախում։

Արևելյան և հատկապես հարավ-արևելյան Անատոլիայում քիչ չեն այնպիսի շրջաններ, որտեղ տարրական ուսուցումով ընդգրկված է դպրոցահասակ երեխաների կեսից պակաս մասը։ Այդպիսի շրջաններ են Խակկյարի, Վանի, Ագրի, Մարդինի, Սիիրդի, Մուշի, Բիթլիսի, Օրդուլի և այլ վիլայեթները։ Այսպես՝ 1952—53 ուսումնական տարում, Մարդինի վիլայեթում դպրոց հաճախող երեխաները կազմել են ընդամենը 23,2%[1]։

Վերջին տարիներին Թյուրքական կառավարությունը մշակել է անդրագիտությունը վերացնելու մի շարք պրոյեկտներ, սակայն նրանք բոլորն էլ շարունակում են մնալ թղթի վրա, որովհետև չունեն նյութական հաստատուն հիմք։ Վերջին 16 տարիների ընթացքում (1940—1955 թ.թ.) տարրական դպրոցի կարիքների համար ծախսված է մոտ 1,5 մլր. լիրա[2], այսինքն 1950 թ. ռազմական ծախսերի գումարից երկու անգամ պակաս։ 1952 թ. տարրական կրթության մասին հատուկ բրոշյուրով հրատարակվեց մի օրինագիծ, որի համաձայն բնակչությունը դպրոցներով լիովին ապահովելը և դպրոցները ուսուցիչներով կոմպլեկտավորելը նախատեսվում է միայն 1965 թ.։ Այս տարի տվյալ օրինագիծը կներկայացվի մեջլիսին ի քննություն։ Ըստ Թյուրքական պաշտոնական գործիչների խոստովանության, Թյուրքիային հարկավոր է կառուցել դպրոցական նոր շենքեր, որոնցից 592-ը քաղաքներում, 16.912-ը՝ գյուղական վայրերում։ Անհրաժեշտ է պատրաստել մոտ 30 հազ. ուսուցիչ[4]։ Նախագծված ծրագրով տարրական դպրոցների շինարարության իրականացման համար ընդհանուր գումար սահմանվում է 700.160 հազ. լիրա (ելնելով ամեն մի դպրոցական շենքի համար 40 հազ. լիրայի հաշվից), այն դեպքում, երբ այդ նպատակների համար բյուջետային հատկացումները տարեկան 20 մլն. լիրայից չեն անցնում[5]։ Այսպիսով, եթե նոր դպրոցների շինարարարության գործը պետք է շարունակվի ներկայիս տեմպերով, ապա երկրի լիովին ապահովումը տարրական դպրոցներով՝ նույնիսկ հաշվի չառնելով բնակչության բնական աճը, կարելի է հասցնել միմիայն 35 տարի հետո։

Դպրոցական շենքերի և ուսուցչական կադրերի պակասության պատճառով, գյուղական տարրական դպրոցների ուսուցիչների ճնշող մեծամասնությունը միաժամանակ ղեկավարում է մի քանի դասարան։ «Գյուղի ուսուցիչները,— գրում էր «Ուլուս» թերթը 4/VII 1953 թ. — ստիպված են լինում միաժամանակ պարապել 2—3 և հաճախ էլ 5 դասարանի հետ։ Գրեթե անհնարին է գտնել գյուղական այնպիսի ուսուցիչ, որը վարեր միայն մեկ դասարան»։

Դրությունը վատթարանում է նաև այն բանով, որ եղած շենքերը վատ են կահավորված և բարեկարգված չեն։ 1952 թ. լուսավորության նախկին մինիստր Տ. Իլերին մեջլիսում ունեցած իր ելույթում հայտա-

---

1 «Վաթան», 10/VI 1953։
2 «Ջաֆեր», 27/II 1956։
3 Նույն տեղում, 7/III 1956։
4 «Ջումհուրիեթ», 17/III 1954։
5 «Ուլուս», 27/II 1956 թ. և «Ռեսմի գազեթե», 2/XI 1955։

բարեց. «Վիլայեթներից ստացված պաշտոնական տեղեկություններով դպրոցական շենքերի լիովին քանդվելու և հետագա օգտագործման համար անպետք լինելու հետևանքով, փակված են եղել 587 դպրոց (1950 թ. հետո. Ա. Ռ.). 918 դպրոց պահանջում են հիմնական վերանորոգում և եթե անմիջապես վերանորոգման չենթարկվեն, ապա 1—2 տարուց հետո, երանք նույնպես անպետք կդառնան, ...303 դպրոց ունեն հողե կտուրներ... իսկ 1256 դպրոց զուգարանից զուրկ են[1]։ Տարրական դպրոցներում, առանձնապես գյուղական՝ գրենական պիտույքներ գրեթե ամենևին չկան, որովհետև ազգային լուսավորության մինիստրությունը նմանօրինակ կարիքների համար հատկացումներ բաց չի թողնում[2]։

Թյուրքիայում տարրական դպրոցի միասնական տիպային կառուցում չկա։ 5-ամյա դպրոցներին զուգընթաց, որտեղ դասավանդում են մանկավարժական ուսումնարանի շրջանավարտները՝ գյուղական վայրերում գոյություն ունեն նաև այսպես կոչված «դաստիարակչական դպրոցներ» (eg'itmen okulu), ուսուցման եռամյա ժամկետով, ուր դասավանդումը տարվում է «դաստիարակներով», որոնք մանկավարժական հատուկ կրթություն չունեն։ Այս վերջին դպրոցները չեն տալիս նախնական անհրաժեշտ կրթություն և ոչ էլ միջնակարգ ուսումնական հաստատություններն ընդունվելու իրավունք։

Տարրական դպրոցում բացակայում է մեթոդոլոգիապես միասնականորեն մշակված դասավանդման սիստեմը։ Շատ առարկաների դասագրքերը դեռևս կազմված չեն։ Այսպես, 2-րդ և 3-րդ դասարաններում կա միայն մեկ դասագիրք—գիրք ընթերցանության համար՝ չնայած որ այդտեղ ավանդվում են նաև և այնպիսի առարկաներ, ինչպես թվաբանություն, բնագիտություն և այլն[3]։ Առանձնապես վատ է թյուրքերեն լեզվի դասավանդման գործը, քանի որ դեռևս չեն մշակվել ուղղագրական ճշգրիտ կանոններ, չկա դպրոցական ուղղագրական բառարան։ Թե դասագրքերում և թե մանկական այլ գրականության մեջ, միևնույն բառը միշտ կարելի է հանդիպել զանազան ուղղագրությամբ։

Վերոհիշյալ փաստերը շեշտակիորեն իջեցնում են առաջադիմությունը և վերջին հաշվով հասցնում են այն բանին, որ տարրական դպրոցի շրջանավարտները հանրակրթական խիստ ցածր մակարդակ ունեն։ Նրանց մեծամասնությունը դպրոցն ավարտելուց հետո մտնում է աշխատանքային կյանքի մեջ, դադարում է կարդալ որևէ բան և առժամանակ հետո կորցնում է այն փոքր գիտելիքները, որոնք ստացել է դպրոցում։ Ուշադրության արժանի է կիսապաշտոնական «Զաֆեր» թերթի վերին աստիճանի բնորոշ արտահայտությունը այդ մասին։ «Տարրական դպրոցի շրջանավարտների ճնշող մեծամասնությունը, գրում է թերթը, մնում է գյուղում և դրանով վերջացնում է իր ուսումը ...Քաղաքային ավաններում և նույնիսկ քաղաքներում միայն շատ քչերին է հաջողվում կրթությունը շարունակել։ Ի՞նչ բանի հասցրեց այդ ...Ինչպես ցույց են տալիս

---

[1] «Զաֆեր», 27/XII 1952։
[2] «Ջումհուրիեթ», 19/II 1952։
[3] Նույն տեղում, 9.II 1953։

նախկին տարիների վիճակագրական տվյալները, տարրական դպրոցն ավարտած պատանիների և միջին հասակի անձերի մեծ մասը, վերջին 16 տարիների ընթացքում կարդալը և գրելը մոռացել են»[1]։

Թյուրքիայի միջնակարգ ուսումնական հաստատությունները ներկայացված են հանրակրթական, պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոցներով, ուսումնարաններով և լիցեյներով։

Հանրակրթական միջնակարգ դպրոցը իր եռամյա դասընթացով տալիս է ոչ լրիվ միջնակարգ կրթություն։ Նրա հաջորդ աստիճանը հանդիսանում է լիցեյը (նույնպես 3 տարի), որը իրավունք է տալիս ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն։ 1954—55 ուսումնական տարվա սկզբին միջնակարգում և բարձրագույնում սովորողների ընդհանուր թիվը կազմում էր 206 հազ. մարդ[2]։

Միջնակարգ ուսումնական հաստատությունները, ինչպես և տարրական դպրոցները դասատվական կադրերի, դպրոցական շենքերի և գրենական պիտույքների սուր կարիք ունեն։ Մեջլիսի դեպուտատ Ֆեթի Ուլկյուի խոստովանությամբ, միջնակարգ ուսումնական հաստատություններում պակասում է 2054 դասատու, և այդ այն ժամանակ, երբ միայն 1955 թ. 186 ուսուցիչ ցածր աշխատավարձի պատճառով թողել են դպրոցը։ 55 լիցեյներում և 135 միջնակարգ դպրոցներում մինչև հիմա չկան ֆիզիկայի և քիմիայի ձեռնարկներ։ Այս ամենը, վերջին հաշվով բացասաբար է անդրադառնում աշակերտների և ուսանողների առաջադիմության վրա, որոնք ավարտում են գիտելիքների ցածր մակարդակով։ «Ակշամ» թերթի թղթակիցը Շևկեթ Ռադոն, իր հոդվածներից մեկում գրում էր. «Այսօր լիցեյների շրջանավարտները դժբախտ մարդիկ են... Այն մարդը, որը ավարտել է լիցեյը 20 տարի առաջ, և նա, որը լիցեյից դուրս է եկել անցյալ տարի, ունեն կուլտուրական տարբեր մակարդակ։ Վերջինը շատ թույլ է ամենից առաջ թյուրքական լեզուն գիտենալու տեսակետից»[4]։

Թյուրքիայում համեմատաբար լայն են ներկայացված պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունները։ Դրանց են վերաբերում մանկավարժական, արհեստավորական, գյուղատնտեսական, առևտրական, բժշկական, երկաթգծային, շինարարական և այլ դպրոցները, ուսումնարանները, լիցեյները, որոնք մասնագետներ են պատրաստում երկրի տնտեսության զանազան ճյուղերի համար։ Ունակության մեջ, հատկապես նրա ցածր խմբերում, նկատվում է բարձր հետաքրքրություն դեպի այդ ուսումնական հաստատությունները, և ընդհակառակը, հետաքրքրությունը դեպի հանրակրթական միջնակարգ դպրոցը մեծ չէ, որովհետև միայն քչերն են, որ այն ավարտելուց հետո հնարավորություն ունեն շարունակել կրթությունը, իսկ մնացածները գործազրկության պատճառով չեն կարողանում գտնել իրենց համար որևէ կիրառում և պատրաստ են անցնել պատահած աշխատանքի։

---

1 «Զաֆեր», 7/III 1956։
2 Նույն տեղում, 27/IX 1954։
3 «Ուլուս», 27/II 1956։
4 «Ակշամ», 27/III 1953։

Բավականաչափ տարածված են արհեստավորական ուսումնարաններն ու իգական գիշերային արհեստավորական դպրոցները։ Առաջիններում սովորում են 25 հազ., երկրորդներում՝ 28.300 մարդ[1]։

Ներկայումս Թյուրքիայում գործում է 4 համալսարան, որոնցից երկուսը գտնվում են Ստամբուլում, մեկը Անկարայում, մյուսը Իզմիրում։ Ստամբուլի երկրորդ համալսարանը կոչվում է տեխնիկական և ըստ էության պոլիտեխնիկական ինստիտուտ է։ Իզմիրի համալսարանը պաշտոնապես բացվել է 1955—56 ուս. տարում բժշկական և գյուղատնտեսական ֆակուլտետներով, ուր պարապմունքները տարվում են դեռ առաջին կուրսերում։ Անկարայի և Ստամբուլի համալսարաններում սովորում են 29.047 մարդ, Իզմիրի համալսարանում՝ 206 մարդ[2]։ Սրանցից ամենամեծը Ստամբուլի համալսարանն է, որը 1953—54 ուս. տարում ուներ 13.199 ուսանող։ Նրա կազմի մեջ մտնում են իրավաբանական, բժշկական, պոլիտեխնիկական, տնտեսական, գրական և անտառային ֆակուլտետները։

Տեխնիկական համալսարանը ամեն տարի պատրաստում է 180—200 ինժեներներ և կազմված է շինարարական, մեքենաշինական, էլեկտրատեխնիկական, ճարտարապետական և լեռնային ֆակուլտետներից։ Համալսարանը և բարձրագույն տեխնիկական ուսումնարանը, որ գտնվում է Յըլդըզում (Ստամբուլ) և բաց է թողնում տարեկան 100 ինժեներ, ծածկում են երկրի ինժեներական կադրերի պահանջի միայն աննշան մասը։ Դրա հետևանքով Թյուրքիան ուսանողների մի մասը ուղարկում է արտասահմանյան տեխնիկական ուսումնական հաստատությունները և դիմում է օտարերկրյա ինժեներներին։ Ընթացիկ տարում արտասահմանում սովորում են 2525 թյուրք ուսանողներ[3]։

Մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններից առավել նշանակալի են Ստամբուլի առևտրա-տնտեսական, ծովային և մանկավարժական ինստիտուտները, Ստամբուլի գեղեցիկ արվեստների ակադեմիան, Անկարայի գյուղատնտեսական և մանկավարժական ինստիտուտները։

Վ. Աթաթյուրքի մահից հետո, Թյուրքիայի կառավարությունը սկսեց աստիճանաբար հեռանալ լաիցիզմի սկզբունքից, որի համաձայն կրոնը բաժանված էր պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։ Այդ նահանջը ավարտվեց 1950 թ. մայիսին, երբ դեմոկրատական պարտիան իշխանության գլուխն անցավ և երբ կրոնը պաշտոնապես մտցրեց որպես տարրական դպրոցի դասավանդման առարկա և վերստին բացեց իմամներ և քարոզիչներ պատրաստելու դպրոցները, որոնց թիվը 1952 թ. 7-ից 1954 թ. սկզբին բարձրացավ մինչև 15-ի։

Ընթացիկ տարվա տարեսկզբին, պրեմյեր-մինիստր Ադնան Մենդերեսը հանդես գալով Կոնյա քաղաքում, հայտարարեց. «Ինչ վերաբերում է խղճի ազատությանը, ապա թյուրքական ազգը հանդիսանում է մուսուլմանական և մուսուլմանական էլ կմնա։ Նրա համար, որպեսզի մուսուլմանական մնա, անտարակույս է, որ անհրաժեշտ է երեխաներին և նոր սերնդին տալ կրոնական խրատներ, տալ նրանց գիտելիքներ կրոնի հի-

[1] «Ռեսմի գազեթե», 2/XI 1953։

[2] «Զաֆեր», 7/II 1956։

[3] Նույն տեղում, 7/II 1956։

մունքների և կանոնների մասին ... Այս նկատառումով մեր միջնակարգ դպրոցներում կրոնական դիսցիպլիններ մտցնելը կհանդիսանա ժամանակին կիրառվող միջոցառում։ Մենք չենք հավատում, որ հասարակությունը, ազգը, առանց կրոնի կարող են հաստատուն լինել»[1]։

Կրոնի դասավանդումը դպրոցներում և կրոնական դպրոցների ցանցի ընդլայնումը հետապնդում են միանգամայն որոշակի նպատակներ։ Թունավորելով ժողովրդական լայն մասսաների գիտակցությունը կրոնական պրոպագանդայի թմրիրով, ղեկավար շրջանները ձգտում են հեռացնել նրանց ուշադրությունը դասակարգային պայքարից և քարոզելով դասակարգային խաղաղություն ու ազգի կրոնական միասնականություն՝ կրոնը օգտագործել որպես զենք ներքին և արտաքին քաղաքականության համար։

Դեպի Թյուրքիա ուժեղացած օտարերկրյա գրականության հեղեղը գլխավորապես ամերիկյան հակագեղարվեստական գրականության, հասցրել է այն բանին, որ երկրում շեշտակիորեն ընկել է գրքերի վաճառքը, իջել է հետաքրքրությունը դեպի գեղարվեստական գրականությունը։ Այդ իր հերթին, իր ետևից տարել է գրքի հրատարակման կրճատումը։ 1953 թ. Թյուրքիայում հրատարակվել է 3266, 1954 թ.՝ 3585 և 1955 թ.՝ 3250 գիրք[2]։ «Ակշամ» թերթը գրում էր, որ «դպրոցի փակումը իրենով նշանավորում է և գրքի փակում» և ամառային շրջանը, երբ թալկանում է վաճառքը և դադարում է գրականության ընթերցումը, թերթը միանգամայն իրավացիորեն անվանել է «մեռյալ սեզոն»[3]։ Այնինչ, ԱՄՆ-ից և մի քանի այլ երկրներից, անընդմիջվող հեղեղի նման լցվում են բուլվարային և դետեկտիվ ռոմաններ ու ժուռնալներ, որոնց մեջ մարդասպանը դարձվում է հերոս, իսկ գանգստերը՝ ասպետ։

Նման գրականությանը զուգընթաց, Թյուրքական երիտասարդության վրա կործանարար ազդեցություն ունեն ամերիկյան կինոֆիլմերը, որոնք քարոզում են համաշխարհային նոր պատերազմի անհրաժեշտությունը և անխուսափելիությունը, սեռական անառակություն, գանգստերիզմ և ատելություն դեպի ամեն մի առաջավորը և պրոգրեսիվը։ Թյուրքիայում սովորական երևույթ են դարձել սպանությունների, թալանի և բոնարարումների դեպքերը, որոնք գործվում են օտարերկրյա ֆիլմերի և բուլվարային ու դետեկտիվ գրականության ազդեցության տակ։ Զոնդուլդակ քաղաքում մի ոմն Օսման Թեկին, որը կացնով սպանել էր իր հարսին և քրոջը, դատարանում հայտարարում է, որ այդ ոճրագործությունը նա կատարել է արտասահմանյան «Մարդասպանը» ֆիլմի տպավորության տակ[5]։

Թյուրքիայում ոչ մի հոգատարություն չի ցուցաբերվում երեխաների արտադպրոցական հանգստի մասին։ Երկրում կա մանկական միայն երկու փոքր լագեր, Անկարայում և Ստամբուլում, ուր ընդունվում են միայն բուրժուաների երեխաները։ Դպրոցական արձակուրդներից հետո երեխաների ճնշող մեծամասնությունը իր ժամանակը անց է կացնում դաշտային և այլ աշխատանքներում և իր ծնողների հետ բաժանում է ծանր

[1] «Ջումհուրիեթ», 8/I 1956։
[2] «Ջաֆեր», 17/I 1956։
[3] «Ակշամ», 30/VII 1952։
[4] «Ջաֆեր», 3/I 1954։
[5] «Ենի ուլուս», 20/IV 1954։

աշխատանքը, կարիքը և զրկանքները։ Թյուրքական մամուլի տվյալներով, 15 տարեկանից ցածր հասակի երեխաների արտադրության մեջ զբաղված լինելու կողմից Թյուրքիան աշխարհում գրավում է առաջին տեղը։

Իրավարան Խալիլ Մակարաջին, որը իր հոդվածը «Պայքար աղքատների հետ» տեղավորել է «Ջաֆեր» թերթում, հաղորդում է, որ բազմաթիվ երեխաներ, որոնց նկատմամբ ամոռան ամիսների ընթացքում որևէ հոկողություն բացակայում է, դառնում են ստահակների և թափառաշրջիկների զոհ, սրանք գրավում են նրանց, գցում իրենց ցանցերը և ստիպում են մուրացկանություն անել փողոցներում, պուրակներում, կինո-թատրոնների, ընակաշենքերի շքամուտքերի առաջ և այլն։ Ընդամին «աշխատավարձի առյուծի բաժինը նրանք հանձնում են իրենց «պատրոնների»։ Ոտնվելով այդպիսի անձերի շրջանում, նրանք վարժվում են ոպիրտային խժիչքների գործածությանը, թղթախաղին և գողությանը։ Հետագայում նրանցից շատերին սպասում է փողոցային թափառաշրջիկների նույն վիճակը, որովհետև երկրում տիրող գործազրկությունը նրանց թույլ չի տալիս զբաղվել օգտակար աշխատանքով[1]։ Այդ երեխաների համար, աղբարկղների մեջ սննդի մնացորդների պրպտումները և գողությունը դառնում է գլխավոր զբաղմունք։

Թյուրքիայի պրոգրեսիվ հասարակայնությունը պահանջում է ձեռք առնել էֆեկտիվ միջոցներ բարձրացնելու համար բնակչության կուլտուրական մակարդակը և հրաժարվել երիտասարդության դաստիարակության արատավոր մեթոդներից։ Նա իր բախտը միացնում է երկրի կուլտուրական վերելքի, ամբողջ աշխարհի խաղաղասեր ուժերի ընդհանուր պայքարին, ընդդեմ նոր պատերազմի հրձիգների, հանուն խաղաղության և իրենց երեխաների երջանիկ ապագայի։

---

[1] «Ջաֆեր», 19/IV 1953։